



ՏԻԳՐԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՊՏՀ կառավարչական հաշվառման և աուդիտի
ամբիոնի ասիստենտ

ԶՈՒՏ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐԻ
ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ
ՄԵԾՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ
ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ
ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ (ԿՈՆՅԱԿԻ)
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Հիմնաբառեր. *Ֆինանսական կայունություն, գործունեության (ֆինանսական) արդյունքներ, շահույթ, սեփական ընթացիկ ակտիվներ, զուտ ընթացիկ ակտիվներ, ներդրումային գործունեություն, կապիտալ ներդրումներ, երկարատև ներգրավված միջոցներ, ընթացիկ ակտիվներ, ոչ ընթացիկ ակտիվներ, սեփական կապիտալ, ընթացիկ պարտավորություններ, զուտ ընթացիկ ակտիվների նկատմամբ նվազագույն անհրաժեշտ պահանջարկ*

Ամերիկյան հաշվապահական դպրոցի ներկայացուցիչ Դ.Կանինգը (1884-1962) ֆինանսական վիճակի հաշվետվության ակտիվի յուրաքանչյուր հոդվածի գնահատման համար առաջարկում էր յուրահատուկ մոտեցումներ՝ ուշադրությունը սևեռելով ոչ թե հիմնական միջոցների, այլ ընթացիկ ակտիվների գնահատման հիմնախնդիրներին: Ըստ նրա՝ վերլուծության հիմնական խնդիրներից մեկը զուտ ընթացիկ ակտիվների և սեփական ընթացիկ ակտիվների մեծությունների որոշումն է:

Ներկայումս գոյություն ունեն տարբեր դիրքորոշումներ ինչպես զուտ և ընթացիկ ակտիվների տնտեսագիտական բովանդակության, այնպես էլ դրանց հաշվարկի մաթեմատիկական մեկնաբանության հարցերում:

Այսպես՝ ֆինանսական կառավարման բնագավառի հեղինակավոր գիտնական Ի. Բլանկը նշում է, որ ֆինանսական կառավարման և վերլուծության գործընթացում անհրաժեշտ է տարբերել «սեփական շրջանառու կապիտալ» (սեփական ընթացիկ ակտիվներ) և «զուտ շրջանառու կապիտալ» (զուտ ընթացիկ ակտիվներ) հասկացությունները: Ընդ որում, «սեփական շրջանառու կապիտալը», ըստ հեղինակի, արտացոլում է ընթացիկ ակտիվների այն մասը, որը ձևավորվել է սեփական կապիտալի հաշվին, իսկ «զուտ շրջանառու կապիտալը»՝ սեփական կապիտալի և երկարաժամկետ ներգրավված միջոցների հաշվին¹:

Ի. Բլանկն առաջարկում է սեփական ընթացիկ ակտիվների հաշվարկի հետևյալ բանաձևը.

$$ՍԸԱ = ԸԱ - ԵՎՓ_{\text{ԸԱ}} - ԿՊ, \quad (1)$$

որտեղ՝ ՍԸԱ - ն սեփական ընթացիկ ակտիվների գումարն է,

ԸԱ - ն՝ ընթացիկ ակտիվները,

ԵՎՓ_{ԸԱ} - ն՝ ընթացիկ ակտիվների ֆինանսավորմանն ուղղված երկարաժամկետ վարկերը և փոխառությունները,

ԿՊ - ն՝ կարճաժամկետ պարտավորությունները:

Զուտ ընթացիկ ակտիվները, ըստ հեղինակի, պետք է հաշվարկել՝ ընթացիկ ակտիվներից հանելով ընթացիկ պարտավորությունները:

Մեկ այլ հեղինակավոր գիտնական՝ Վ. Կովալյովը, նույնացնում է «սեփական շրջանառու կապիտալ» (սեփական ընթացիկ ակտիվներ) և «զուտ շրջանառու կապիտալ» (զուտ ընթացիկ ակտիվներ) հասկացությունները և առաջարկում հաշվարկել՝ ընթացիկ ակտիվներից հանելով ընթացիկ պարտավորությունները²:

Ն. Լյուբուշինի կարծիքով՝ սեփական ընթացիկ ակտիվները ձևավորվում են սեփական կապիտալի հաշվին և հաշվարկվում որպես սեփական կապիտալի և երկարաժամկետ պարտավորությունների գումարի ու ոչ ընթացիկ ակտիվների տարբերություն³:

Օ. Եֆիմովայի մեկնաբանությամբ՝ սեփական ընթացիկ ակտիվները սեփական կապիտալի այն մեծությունն են, որը կարող է ուղղվել ընթացիկ ակտիվների ձևավորմանը, իսկ զուտ ընթացիկ ակտիվների մեծությունը բնութագրում է ֆինանսավորման պահանջարկը և որոշվում՝ ընթացիկ ակտիվներից հանելով ընթացիկ պարտավորությունները⁴:

Միջազգային վերլուծության մեջ առավել տարածված է հետևյալ մոտեցումը.

$$\text{Սեփ. ընթացիկ ակտիվներ} = \text{սեփ. կապիտալ} - \text{ոչ ընթացիկ պարտավորութ.} \quad (2)$$

$$\text{Զուտ ընթացիկ ակտիվներ} = \text{ընթացիկ ակտիվներ} - \text{ընթացիկ պարտավորութ.} \quad (3)$$

Զուտ ընթացիկ ակտիվների հաշվարկման տնտեսական իմաստը երկարաժամկետ աղբյուրների հաշվին ֆինանսավորվող ընթացիկ ակտիվների

¹ Տե՛ս **Бланк И.**, Основы финансового менеджмента, т. 1, Киев, „Ника-Центр“, 1999, էջ 301:

² Տե՛ս **Ковалев В.**, Анализ баланса, или как понимать баланс (учеб.-практ. пособие). М., „Проспект“, 2009, էջ 273:

³ Տե՛ս **Любушин Н.**, Экономический анализ (3-е изд., перераб. и доп.). М., 2010, էջ 476:

⁴ Տե՛ս **Ефимова О., Мельник М.**, Анализ финансовой отчетности (4-е изд., испр. и доп.). М., „Омега-Л“, 2009, էջ 282:

մեծության որոշումն է: Այլ խոսքով՝ զուտ ընթացիկ ակտիվներն արտացոլում են սեփական և դրան հավասարեցված միջոցների մեծությունը, որն ուղղվել է ընթացիկ ակտիվների ֆինանսավորմանը:

Չուտ ընթացիկ ակտիվների դրական մեծությունը և դինամիկայում դրա աճը կազմակերպության ֆինանսական կայունության և իրացվելիության ընդունելի մակարդակի ապահովման անհրաժեշտ պայման են, ինչը վկայում է ցուցանիշի կարևորության մասին:

Չուտ ընթացիկ ակտիվների հաշվարկման առավել տարածված բանաձևն է.

$$\text{ՉՈԱ} = \text{ԸԱ} - \text{ԸՊ}, \quad (4)$$

որտեղ՝ ՉՈԱ - ն զուտ ընթացիկ ակտիվների գումարն է,

ԸԱ - ն՝ ընթացիկ ակտիվները,

ԸՊ - ն՝ ընթացիկ պարտավորությունները:

Սակայն զուտ ընթացիկ ակտիվների փոփոխության պատճառների գնահատման համար առավել հարմար է ձևափոխումների արդյունքում ստացվող հետևյալ բանաձևը.

$$\begin{aligned} \text{ՉՈԱ} &= \text{ԸԱ} - \text{ԸՊ} = (\text{Ա} - \text{ՈԸԱ}) - \text{ԸՊ} = (\text{Պ} - \text{ՈԸԱ}) - \text{ԸՊ} = (\text{ՍԿ} + \text{ՈԸՊ} + \text{ԸՊ} - \text{ՈԸԱ}) - \\ &- \text{ԸՊ} = \text{ՍԿ} + \text{ՈԸՊ} - \text{ՈԸԱ}, \end{aligned} \quad (5)$$

որտեղ՝ Ա - ն ակտիվների ընդհանուր գումարն է,

Պ - ն՝ պասիվների ընդհանուր գումարը,

ՈԸԱ - ն՝ ոչ ընթացիկ ակտիվների գումարը,

ՍԿ - ն՝ սեփական կապիտալը,

ՈԸՊ - ն՝ ոչ ընթացիկ պարտավորությունները:

Չուտ ընթացիկ ակտիվների դրական մեծությունը և դրա աճը մնացած հավասար պայմաններում վկայում են կազմակերպության բարվոք ֆինանսական վիճակի մասին: Սակայն կազմակերպության ֆինանսական դրության բարելավման մասին փաստում է ընդհանուր ակտիվների մեջ հատկապես զուտ ընթացիկ ակտիվների տեսակարար կշռի աճը.

$$\text{ՏԿ}_{\text{ՉՈԱ}} = \text{ՍԸԱ} / \text{Ա} \quad (6)$$

Չուտ ընթացիկ ակտիվների բացասական մեծությունը կազմակերպության ֆինանսական դրությունը գնահատում է բացասական տեսանկյունից, վկայում է ֆինանսական կառավարման կարևորագույն սկզբունքներից մեկի խախտման մասին. ֆինանսապես կայուն և վճարունակ կազմակերպությունում կայուն պասիվների հաշվին պետք է ֆինանսավորվեն ոչ ընթացիկ ակտիվները և ընթացիկ ակտիվների որոշակի մասը: Իսկ ահա բացասական զուտ ընթացիկ ակտիվները վկայում են, որ կարճաժամկետ փոխառու կապիտալի հաշվին ֆինանսավորվել են ընթացիկ ակտիվները և ոչ ընթացիկ ակտիվների մի մասը:

«ՄԱՊ» ՓԲԸ վերլուծական հաշվեկշռի տվյալների հիման վրա որոշենք զուտ ընթացիկ ակտիվների գումարը 2010-2012 թթ. (աղյուսակ 1):

Չուտ ընթացիկ ակտիվների բացասական մեծության պայմաններում հիմքեր չկան խոսելու կազմակերպության ֆինանսական կայունության մասին, եթե նույնիսկ ֆինանսական անկախության գործակիցը գերազանցում է միջազգային պրակտիկայում ընդունված նորմատիվային մեծությունը (0,5):

Ուսումնասիրվող ժամանակահատվածում «ՄԱՊ» ՓԲԸ զուտ ընթացիկ ակտիվների գումարն աճել է: Այսպես՝ 01.01.2011 թ. զուտ ընթացիկ ակտիվների գումարն աճել է 80673 հազար դրամով, սակայն մեծությունը դեռևս բացասական է, և կազմակերպության ֆինանսական կայունության մասին խոսք լինել չի կարող:

Աղյուսակ 1

«ՄԱՊ» ՓԲԸ 2010-2012 թթ. վերլուծական հաշվեկշիռ

/հազ. դրամ/

Հոդված	Ամսաթիվ		
	01.01.10	01.01.11	01.01.12
1. Ոչ ընթացիկ ակտիվներ	315552	427442	825428
2. Ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	5339338	6353736	8938773
2.1. Հումք և նյութեր	716943	946387	1212126
2.2. Արագամաշ առարկաներ	4	202	-
2.3. Անավարտ արտադրություն	3267864	3592652	3437672
2.4. Ապրանքային պաշարներ	627457	574156	752149
2.5. Դեբիտորական պարտքեր և այլ ընթացիկ ակտիվներ	677172	1238955	3536383
2.6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	49898	1384	443
Հաշվեկշիռ	5654890	6781178	9764201
3. Սեփական կապիտալ, այդ թվում՝	104027	289560	182463
3.1. Կանոնադրական կապիտալ	163500	163500	163500
3.2. Լրացուցիչ կապիտալ	8419	8419	8419
3.3. Պահուստային կապիտալ	132205	132205	-
3.4. Չբաշխված շահույթ	(200097)	(14564)	10544
4. Ոչ ընթացիկ պարտավորություններ	233	7263	8188635
5. Ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	5550630	6484355	1393103
5.1. Ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	1510997	2253760	-
5.2. Կրեդիտորական պարտքեր	4039633	4230595	1393103
Հաշվեկշիռ	5654890	6781178	9764201
Զուտ ընթացիկ ակտիվների մեծությունը	-211292	-130619	7545670

Իրավիճակը կտրուկ փոխվել է 2011-ին, և 01.01.2012 թ. դրությամբ զուտ ընթացիկ ակտիվների գումարը կազմում է 7545670 հազար դրամ: Զուտ ընթացիկ ակտիվների կտրուկ աճն ու դրական գումարը վկայում են կազմակերպության ֆինանսական վիճակի բարելավման մասին: Սակայն այստեղ անհրաժեշտություն է առաջանում գնահատելու զուտ ընթացիկ ակտիվների մեծությունը. արդյո՞ք այդ գումարը բավարար է կազմակերպության համար, և արդյո՞ք ակտիվների բավարար մասն է ֆինանսավորվում երկարաժամկետ

ներգրավված միջոցների հաշվին: Հարկ է մանրամասն վերլուծել նաև զուտ ընթացիկ ակտիվների գումարի աճի (նվազման) վրա ազդող գործոններն ու դրանց ազդեցության չափը:

Կազմակերպության համար նվազագույն անհրաժեշտ զուտ ընթացիկ ակտիվների գումարի որոշումը պայմանավորված է արդեն հիշատակված կանոնով. ֆինանսապես կայուն և վճարունակ կազմակերպությունում սեփական կապիտալի և երկարաժամկետ ներգրավված միջոցների հաշվին պետք է ֆինանսավորվեն ոչ իրացվելի ակտիվները: Ջուտ ընթացիկ ակտիվները ներկայացնում են սեփական միջոցները, որոնք ուղղվում են ընթացիկ ակտիվների ֆինանսավորմանը: Ըստ այդմ՝ վերլուծաբանի խնդիրը պետք է լինի սեփական և դրան հավասարեցված միջոցների մեծության որոշումը, որոնք պետք է ծածկեն առավել դանդաղ իրացվելի և դժվար իրացվելի ակտիվները:

Նվազագույն անհրաժեշտ (բավարար) զուտ ընթացիկ ակտիվներ =
= առավել ոչ իրացվելի ակտիվներ (7)

Խնդիրն այն է, որ տարբեր ոլորտներում, տարբեր կազմակերպություններում առավել ոչ իրացվելի ակտիվներ կարող են համարվել ակտիվների տարբեր խմբեր, տարբեր հոդվածներ: Ճշգրիտ հաշվարկը հիմնվում է յուրաքանչյուր կազմակերպության ընթացիկ ակտիվների յուրաքանչյուր բաղադրիչի առանձին, մանրակրկիտ ուսումնասիրության և իրացվելիության մակարդակի գնահատման վրա: Մեր կարծիքով՝ խմիչքների արտադրության ոլորտում, մասնավորապես՝ կոնյակագործության մեջ, դժվար իրացվելի ակտիվների թվին, ոչ ընթացիկ ակտիվներից բացի, կարելի է դասել նաև նյութական պաշարները, սեփական արտադրության կիսապատրաստուկները և անավարտ արտադրությունը: Սա պայմանավորված է խմիչքների արտադրության առանձնահատկություններով և, մասնավորապես, այն հանգամանքով, որ այս ոլորտում անավարտ արտադրանքը կամ սեփական արտադրության կիսապատրաստուկները պատրաստի արտադրանքի են վերածվում գործառնական բավականին երկար (որոշ դեպքերում՝ մի քանի տարի) պարբերաշրջանի ընթացքում՝ կապված տեխնոլոգիական հնեցման հետ:

Ջուտ ընթացիկ ակտիվների փաստացի մեծության համեմատումը դրա նվազագույն անհրաժեշտ (բավարար) մեծության հետ, թույլ է տալիս եզրակացություններ կատարել ընթացիկ ակտիվների ֆինանսավորմանն ուղղված սեփական և դրանց հավասարեցված միջոցների բավարարության կամ անբավարարության մասին:

Ջուտ ընթացիկ ակտիվների փաստացի մեծության և դրա նվազագույն անհրաժեշտ (բավարար) մեծության տարբերությունը կարելի է ներկայացնել որպես սեփական միջոցներով դանդաղ իրացվելի ընթացիկ ակտիվների ապահովվածության պաշար կամ պարզապես կազմակերպության սեփական միջոցներով ապահովվածության պաշար: Այս ցուցանիշը կազմակերպությանը հնարավորություն կտա առաջիկայում պահպանելու կայուն ֆինանսական դրությունը, իրականացնելու մասշտաբային ներդրումային քաղաքականություն կամ դիմակայելու ֆինանսական դժվարություններին՝ մասնավորապես իրացման ծավալների անկման պայմաններում:


Այսպիսով՝ սեփական միջոցներով ապահովվածության պաշարը կարելի է ներկայացնել որպես առաջիկայում փոխառու միջոցների առաջընթաց աճի հնարավորություն, որը կարող է լինել առանց ֆինանսական կայունության կորստի: Այսինքն՝ կազմակերպությունը կարող է ներգրավել լրացուցիչ փոխառու միջոցներ և պահպանել կայուն ֆինանսական վիճակ:

Վերը նշված մոտեցմամբ հաշվարկենք թվարկված ցուցանիշները «ՄԱՊ» ՓԲԸ-ի համար:

Աղյուսակ 2

«ՄԱՊ» ՓԲԸ զուտ ընթացիկ ակտիվների նվազագույն անհրաժեշտ (բավարար) մեծությունը և սեփական միջոցներով ապահովվածության պաշարը

Ցուցանիշ	/հազ. դրամ/		
	01.01.10	01.01.11	01.01.12
Սեփական ընթացիկ ակտիվների փաստացի մեծություն	-211292	-130619	7545670
Սեփական ընթացիկ ակտիվների նվազագույն անհրաժեշտ (բավարար) մեծություն	3984807	4539039	4649798
Սեփական միջոցներով ապահովվածության պաշար	-4196099	-4669658	2895872



Գծապատկեր 1. Ձուտ ընթացիկ ակտիվների փաստացի և բավարար մեծությունների համեմատական բնութագիրը

Հաշվարկի արդյունքները ցույց են տալիս, որ «ՄԱՊ» ՓԲԸ-ն 01.01.2010 և 2011 թթ. դրությամբ զուտ ընթացիկ ակտիվներ չի ունեցել, այն դեպքում, երբ դրանց նվազագույն պահանջարկը 01.01.2010 թ. դրությամբ եղել է 3984807 հազար դրամ, իսկ 01.01.2011 թ. դրությամբ՝ 4539039 հազար դրամ:

Այդ ժամանակահատվածում «ՄԱՊ» ՓԲԸ ֆինանսական կայունության մակարդակը կարելի է գնահատել շատ ցածր:

2011 թ. նկատվում է «ՄԱՊ» ՓԲԸ զուտ ընթացիկ ակտիվների փաստացի մեծության կտրուկ աճ, որի արդյունքում 01.01.2012 թ. դրությամբ դրա մեծությունը կազմել է 7545670 հազար դրամ, իսկ սեփական միջոցներով ապահովվածության պաշարը՝ 2895872 հազար դրամ: Կարելի է ասել, որ 01.01.2012 թ. կազմակերպությունը սեփական միջոցներով ապահովվածության առումով գտնվում է բավական լավ վիճակում: Ընդ որում, այսպիսի իրավիճակը համարվում է բարվոք ոչ միայն տվյալ պահի, այլ նաև առաջիկայում կազմակերպության գործունեության բարելավման, ֆինանսական կայունության և վճարունակության տեսանկյունից:

Զուտ ընթացիկ ակտիվների բացարձակ մեծության հաշվարկի համար կարելի է կիրառել վերը բերված (4) և (5) բանաձևերը: Սակայն դրանցից միայն (5) բանաձևն է ($\text{ԶԸԱ} = \text{ՍԿ} + \text{ՈԸՊ} - \text{ՈԸԱ}$) արտացոլում զուտ ընթացիկ ակտիվների մեծության վրա ազդող գործոնները, դրա կրճատման պատճառներն ու օպտիմալացման լծակները:

Իրականում ընթացիկ ակտիվների ու ընթացիկ պարտավորությունների գումարները թույլ են տալիս հաշվարկել զուտ ընթացիկ ակտիվների մեծությունը, սակայն դրանք չեն համարվում այդ ցուցանիշի վրա ազդող գործոններ, լծակներ:

$\text{ԶԸԱ} = \text{ՍԿ} + \text{ՈԸՊ} - \text{ՈԸԱ}$ բանաձևից պարզ է դառնում, որ զուտ ընթացիկ ակտիվների վրա ազդող հիմնական բաղադրիչը, գործոնը սեփական կապիտալն է, որի փոփոխությունը պայմանավորված է կազմակերպության գործունեության շահութաբերության մակարդակի փոփոխությամբ: Ջանազան կազմակերպությունների գործունեության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ստացվող վնասները հանգեցնում են զուտ ընթացիկ ակտիվների մեծության կրճատման: Այսպիսով՝ զուտ ընթացիկ ակտիվների մեծության կրճատման առաջին և հիմնական պատճառը ստացվող վնասներն են և, որպես հետևանք՝ սեփական կապիտալի մեծության կրճատումը: Գործունեության շահութաբերության մակարդակի աճը, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճին, զուտ ընթացիկ ակտիվների գումարի աճի հզոր լծակ է և կազմակերպության ֆինանսական կայունության ամրապնդման կարևոր նախապայման:

Զուտ ընթացիկ ակտիվների գումարի կրճատման պատճառ կարող են դառնալ նաև կազմակերպությունում կապիտալ ներդրումները: Տվյալ ժամանակահատվածում սեփական կապիտալի աճի գումարը գերազանցող ներդրումների կատարման նպատակով կազմակերպությունը պետք է ավելացնի ֆինանսավորման փոխառու աղբյուրները:

Զուտ ընթացիկ ակտիվների կրճատման պատճառներից մեկն էլ կազմակերպության վարած ֆինանսական քաղաքականությունն է, ավելի որոշակի՝ կապիտալ ներդրումների (ոչ ընթացիկ ակտիվների աճ) ֆինանսավորումը ընթացիկ պարտավորությունների (կարճաժամկետ վարկեր և փոխառություններ) հաշվին: Շատ հաճախ կազմակերպությունները կապիտալ ներդրումներ կատարելու նպատակով չեն ցանկանում կամ չեն կարողանում ներգրավել երկարաժամկետ ֆինանսավորման աղբյուրներ, ուստի ներգրավում են կարճաժամկետ վարկեր: Այս դեպքում, այլ հավասար պայմաններում, զուտ ընթացիկ ակտիվների գումարը կնվազի: Այսինքն՝ ֆինանսավոր-

ման կարճաժամկետ աղբյուրների ուղղումը կապիտալ ներդրումների իրականացմանը կհանգեցնի զուտ ընթացիկ ակտիվների գումարի կրճատման:

Այսպիսով՝ զուտ ընթացիկ ակտիվների նվազման հիմնական պատճառները կարելի է բաժանել երեք խմբի.

1. գործունեության հետևանքով վնասների ստացում, որը հանգեցնում է սեփական կապիտալի գումարի կրճատման,
2. խոշոր կապիտալ ներդրումների իրականացում,
3. ներդրումային ծրագրերի ֆինանսավորում ընթացիկ պարտավորությունների հաշվին:

«ՄԱՊ» ՓԲԸ հաշվետվական տվյալները ցույց են տալիս, որ 2010 թ., 2009 թ. համեմատությամբ, զուտ ընթացիկ ակտիվների բացասական մեծությունը կրճատվել է 80673 հազար դրամով (01.01.2011 թ. դրությամբ՝ -130619 հազար դրամ, 01.01.2010 թ. դրությամբ՝ -211292 հազար դրամ): Այդ փոփոխությունը պայմանավորված է 2010 թ. կազմակերպության ստացած շահույթով (185533 հազար դրամ), որի չափով աճել է զուտ ընթացիկ ակտիվների գումարը: Զուտ ընթացիկ ակտիվների բացասական մեծությունն աճել է ի հաշիվ ոչ ընթացիկ ակտիվների 111890 հազար դրամ աճի: Ոչ ընթացիկ պարտավորությունների գումարի աճը (7030 հազար դրամով) հանգեցրել է զուտ ընթացիկ ակտիվների պակասության՝ նույն չափով կրճատման:

Այսպիսով՝ 80673(185533+7030-111890) հազար դրամով զուտ ընթացիկ ակտիվների բացասական գումարի կրճատումը պայմանավորված է կապիտալ ներդրումների աճի համեմատությամբ սեփական կապիտալի գումարի աճի առաջընթաց տեմպով:

2011 թ. կազմակերպության զուտ ընթացիկ ակտիվներն աճել են 7676289 հազար դրամով և կազմել 7545670 հազար դրամ: Աճը տեղի է ունեցել ի հաշիվ հետևյալ գործոնների.

- 1) սեփական կապիտալի աճ (նվազում)՝ 107097 հազար դրամ,
 - 2) ոչ ընթացիկ պարտավորությունների աճ (նվազում)՝ 8181372 հազար դրամ,
 - 3) ոչ ընթացիկ ակտիվների աճ (նվազում)՝ 397986 հազար դրամ,
- Ընդամենը՝ -107097+8181372-397986=7676289 հազար դրամ:

2011 թ. գործունեության արդյունքներով «ՄԱՊ» ՓԲԸ-ն ունեցել է 107097 հազար դրամի չափով վնաս, որը հանգեցրել է զուտ ընթացիկ ակտիվների գումարի՝ նույն չափով կրճատման: Զուտ ընթացիկ ակտիվների գումարը նվազել է նաև 397986 հազար դրամով՝ իրականացված կապիտալ ներդրումների չափով: Զուտ ընթացիկ ակտիվների գումարն աճել է բացառապես երկարաժամկետ վարկերի ներգրավման հաշվին: Ընդ որում, 2011 թ. կազմակերպության կարճաժամկետ վարկերը ևս վերածնակերպվել են որպես երկարաժամկետ:

Այսպիսով՝ զուտ ընթացիկ ակտիվների աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ երկարաժամկետ փոխառու միջոցների ներգրավումը 2011 թ. բազմակի գերազանցել է կատարված կապիտալ ներդրումների գումարը:

Հաշվի առնելով զուտ ընթացիկ ակտիվների կապը կազմակերպության գործունեության հիմնական ցուցանիշների հետ՝ կարելի է որոշել ակտիվների գումարի թույլատրելի (առավելագույն) աճը (այդ թվում՝ ոչ ընթացիկ ակտիվներում թույլատրելի ներդրումները), որը չի հանգեցնի զուտ ընթացիկ

ակտիվների մեծության՝ դրա նվազագույն անհրաժեշտ (բավարար) մակարդակից ավելի նվազման:

Թույլատրելի աճ (ոչ ընթացիկ ակտիվների և դանդաղ իրացվելի ընթացիկ ակտիվների) <=(սեփական կապիտալի աճ + ոչ ընթացիկ պարտավորությունների աճ) + (նախորդ տարվա զուտ ընթացիկ ակտիվների փաստացի գումար – նախորդ տարվա զուտ ընթացիկ ակտիվների նվազագույն անհրաժեշտ (բավարար) մեծություն) (8)

«ՄԱՊ» ՓԲԸ-ի համար հաշվարկը կլինի.

$$(825428-427442) + (1212126+3437672) - (946387+3592652) <=(182463-289560)+ \\ + (8188635-7263) + (-130619-4539039) \\ 508745 \text{ հազար դրամ} <= 3404617 \text{ հազար դրամ}$$

Այսպիսով՝ ամփոփելով կարելի է ասել, որ զուտ ընթացիկ ակտիվների աճի և դրա նվազագույն անհրաժեշտ (բավարար) մեծության ապահովման համար անհրաժեշտ է.

- ✓ ձգտել կազմակերպության գործունեության շահութաբերության մակարդակի և շահույթի գումարի աճի,
- ✓ կապիտալ ներդրումների ֆինանսավորումը կատարել երկարաժամկետ ներգրավված միջոցների հաշվին, իսկ կարճաժամկետ վարկերն ուղղել ընթացիկ ակտիվների ֆինանսավորմանը,
- ✓ կապիտալ ներդրումներն իրականացնել ստացված շահույթի և երկարատև ներգրավված միջոցների սահմաններում՝ հաշվի առնելով նախորդ ժամանակաշրջանի սեփական ընթացիկ ակտիվների (փաստացի և նվազագույն անհրաժեշտ) գումարները,
- ✓ ձգտել նյութական պաշարների, անավարտ արտադրության, սեփական արտադրության կիսապատրաստուկների հնարավոր առավելագույն կրճատման (խելամիտ սահմաններում):

ТИГРАН МАНУКЯН

Ассистент кафедры „Управленческого
учета и аудита” АГЭУ

Оценка минимальной величины чистого оборотного капитала и методология факторного анализа на примере производства алкогольных напитков (коньяка) РА. - Статья посвящена подходам расчета собственного оборотного капитала и чистого оборотного капитала предприятий в сфере производства алкогольных напитков Республики Армения и проблемам финансовой устойчивости на основе этих показателей.

Особое внимание в статье уделено методам расчета собственных оборотных средств и чистых оборотных средств.

В статье была представлена также методика расчета минимально необходимой суммы чистого оборотного капитала предприятия, причины его сокращения и рычаги его оптимизации.

TIGRAN MANUKYAN

Assistant at the Chair of
„Managerial Accounting and Audit” at ASUE

Assessing the Minimum Required Value of the Net Working Capital and Factor Analysis Methods of Producing Alcoholic Beverages (Brandy) in the RA. - The article is devoted to the approach of calculating own working capital and net working capital of enterprises in the production of alcoholic beverages in the Republic of Armenia and the problems of financial stability based on these indicators.

Special attention is paid to the methods of calculating own working capital and net working capital.

The method of calculating the minimum required value of the net working capital of the enterprise, the causes of its decline and leverage of its optimization have been also presented In the article.